

**ԱՂԱՍԻ ՇԱԲՈՅԱՆԻ ՀԻՇՍՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇՍՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2017 թվականի մարտի 03-ի N 2557 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության վաստակավոր արտիստ Աղասի Շաբոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Գյումրի քաղաքի Գորկու փողոց N 104 հասցեի շենքի պատին տեղադրելու համար:

Ռ. Սանոյան
Ռ. Ասատրյան
Ա. Գրիգորյան
Ա. Հակոբյան
Հ. Գասպարյան

Կատարող՝ Ա. Հակոբյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

« ԱՂԱՍԻ ՇԱԲՈՑԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Վաստակավոր արտիստ Աղասի Շաբոյանը մեծ ներդրում ունի քաղաքի պարարվեստի բնագավառում: Անգնահատելի դեր ու վաստակ ունի Շիրակ աշխարհի պարարվեստի զարգացման գործում: Ունեցել է մեծ հեղինակություն, սեր և հարգանք է վայելել գործընկերների և հասարակության շրջանում: Հաշվի առնելով վերոգրյալը և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի պահանջը՝ սույն նախագիծը ներկայացվում է Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 10-ին կայանալիք սույն հերթական նիստի քննարկմանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

« ԱՂԱՍԻ ՇԱԲՈՑԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ » ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵՎԱՍՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ավագանու « Աղասի Շաբոյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: